

նախորդ թեմայի մտադիր լինելով այդ նիւթի մասին շարադրութիւն ներկայացնել մագիստրոսի աստիճան ձեռք բերելու համար:

Եկան Մ. Աթոռ նաև Տ. Գեղամ և Տ. Խոսրով վարդապետները:

Շուշու թեմ. դպրանոցի տեսուչ Տ. Բենիկ վարդապետ մի քանի օրով Մ. Աթոռ այցելելուց յետոյ վերադարձաւ իւր տաշտանատեղին:

Ուսանող Պօղոս և Կոստանդին սարկաւաղները Վեհափառ Հայրապետից հրաման ստանալով զնալ շարունակելու իրենց ուսումը՝ ուղեորուեցան դէպի Մոսկուա, շնորհ. Պօղոս սարկաւաղ համալսարանի լեզուադիտական բաժինը մտնելու համար, իրբե իսկական ուսանող, իսկ շնորհ. Կոստանդին սարկաւաղ մշտնելու համար զիւղատնտեսական ինտախառնութիւն:

ՃԵՄԱՐԱՆ ՄԷՏՐ ԱԹՈՌՈՅ

Ինչպէս «Արարատ»-ի նախընթաց համարում ակնարկել էինք՝ առաջիկայ ուսումն. տարուայ համար Վեհափառ Հայրապետի հրամանով ձեմարան պէտք է ընդունուեն 6 աշակերտ Դամասիոյ թեմից և 3 կամ 4 աշակերտ Աստրախանի թեմից՝ փիճակային արդիւնքների հաշուին. մի քանի հոգի ևս հեռաւոր տեղերից են ընդունուած, այնպէս որ ոչ մի աշակերտի համար բաց տեղ չէ մնում այլ ևս:

ձեմարանի շինուածքների վերայ բնդարձակ նորոգութիւններ են լինում և պէտք է փոխուին բուն շինուածքի բոլոր բուսամուտները՝ որոնք իրենց անյարմար ձևով մեծապէս վնասում էին աշակերտների առողջութեանը: Վեհափառ Հայրապետի հրամանով այս բոլորովին անհրաժեշտ դարձած նորոգութեանց համար ծախսուում են ձեմարանի բացման քան

և հինգամեակի առթիւ նուէր ստացած գրամները: Արդէն սկսուած է նոր հիւանդանոցի շինութիւնը, որի համար 4000 ր. են նուիրել Բագուի յայտնի վաճառական Թումայեան եղբայրները:



ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

Աշխարհը լի է հակասութիւններով. քայքայ դժուար թէ որ եւ է տեղ հակասութիւնների այնպիսի ազատ աստարեզ գտնուի, որպիսին մեր աշխարհում մամուլն է ներկայացնում: Մենք կամենում ենք ուշադրութիւն հրաւիրել յատկապէս այն ծայրահեղ հակասութեան վերայ, որ երեւում է այստեղ պարբերաբար եկեղեցւոյ եւ հոգեւորականութեան նկատմամբ յայտնած կարծիքների ու ցանկութիւնների—եւ դրած պահանջների մէջ: Բերենք մի փոքրիկ նմուշ «Մուրճ» ամսագրի վերջին յուլիս համարից՝ մի անմեղ մատնախօսական ակնարկ պ. Ս. Մանդինեանի թարգմանութեամբ Մ. Աթոռի տարաբանում՝ այս տարի լոյս տեսած «Փարբարի քարոզներ»-ի մասին: Այդ մատնախօսութեան հեղինակ Լ.—Լէօն ինչպէս «Մշակ»-ի, այնպէս եւ «Մուրճ»-ի խմբագրութեան անդամ է՝ ամենաքեղուն զրիչը երկու թերթերի համար եւս. ուստի ներկայումս Կովկասի Հայոց մէջ ոչ մի հրապարակախօսի մտքեր այնչափ ընդարձակ չափով չեն տարածուում եւ, պէտք է ենթադրել, ազդեցութիւն գործում որչափ նորասեր: Ինչպէս ուրիշներն արդէն նկատել են, զոր տեղը չէ նա «Լէօ—առիւծ» անունը իւր վերայ առել, պատմական Վասակի պէս (ոչ ուրացող, այլ Մամիկոնեան Վասակի), իւր առիւծութեան ամենափայլուն շրջանի մէջ զրտնուելով այժմ, կանգնած է նա երկու ոտքով երկու սարերի վերայ, եւ քայքայած իշխանու-

թիւն է գործ դնում. — յենում է աջ ոտի վերայ՝ աջ կողմի սարն է գետին անցնում՝ ծախի վերայ է յենում՝ ծախ կողմինը։ Անքնական չի լինի «ընթ», եթէ այդպիսի զօրաւոր ներկայացուցչի հայեացքը նոյն համարներ տիրապետող ազատամտութեան հետ եւ աշխատենք ըստ այնմ եզրակացութիւններ հանել։

«Թափում» են ահազին աշխատանք, ծախսում են դրամ եւ հրատարակում են ինչ... քարոզագիրք» ասում է Լ. խառն վշտով ու զարմանքով եւ քացականչում։ «Ափսոս աշխատանք, ափսոս վատնած փող»։ Բայց իսկապէս նորան ցաւ պատճառողը ո՛չ թէ փողի ու մի օտար, չսիրած մարդու աշխատանքի կորուստն է, այլ այն փաստը, որ «անգլիական նշանաւոր քարոզիչ եւ եկեղեցական գրող Փարրարի քարոզները» թարգմանելն ապացուցել է, թէ մենք հայերս որչափ յետ ենք մնացել. — Տարօրինակ փաստ է հարկէ՝ սակայն քանի քանիսն աշխարհիս երեսին կերակրուում են այսպիսի փաստերով եւ իրենց լուսաւորուած՝ յառաջադէմ՝ երեսակայում՝ հենց այն պատճառով, որ ամենաբոլոր ուղեղի համար իսկ ակներեւ հակասութիւնը կարծեցեալ փաստի մէջ տեսնել չեն կարող։ — Ինչպէ՞ս, մեր յետամնացութեան նշան պէտք է համարուի ուրեմն այն, որ մի խաւարամիտ հայ մարդ քարոզագիրք է թարգմանել, մի ուրիշ խաւարամիտ վճարել է դորա տպագրութեան ծախքը, մինչդեռ նոյն քարոզագրքի հեղինակը ծնունդ է Անգլիայի պէս լուսաւոր ու յառաջադէմ աշխարհում, ուր նման քարոզագրքեր իւրաքանչիւր տարի հարիւրներով ու հազարներով են լոյս տեսնում, ուր մի Սպէշըն իւր քարոզների ծարաւի մարդոց համար յատուկ եկեղեցի շինեց եւ 5000 մարդու տեղը քաւականութիւն չէր տալիս շաքաթը երկու անգամ՝ այդ եկեղեցին դիմող քաղմութեան քառորդ մասին անգամ։ Սակայն զուր է այսպիսի հարցեր տալ այն զարգացած գլուխներին, որոնք ո՛չ մի հեղինակութիւն չեն ծանաչում եւ կարելի է իրենց մտքում խղճում են Փարրարի քարոզները լսող ու կարդացող պարզամիտ անգլիացիներին. որոնք մի անգամ ընդ միշտ վճռել են, թէ «էօփուցիայ»-ից ու «կուլտուրայ»-ից

ընտելեան երեւոյթների, հողի կազմութեան, միկրոքների մասին խօսողը գիտնական է եւ մարդկային ազգի յառաջադիմութեան նպաստող, իսկ ով համարձակեցաւ Աստուծոց, կրօնից, հոգուց, մեղքից խօսել՝ յետ է գնում՝ դէպք միջնադարեան խաւարը։ Թողնենք այդ լաւ լաւ գրքեր կարդացած դպրոցականի խոր հասկացողութիւնը պատմութեան մասին, որ նաեւ ու Սահակի ու Մեսրոպի «ժամանակակից առաջադիմութեան» պահանջ է համարում ընագիտութիւն ու գիւղատնտեսութիւն դաստալը, եւ ընդունենք, որ վրացիները յառաջադէմ ազգերից մէկն են, որովհետեւ վրաց արքայորդի Դաւիթը վրացերէնի է թարգմանել Վոլտէրը. ընդունենք, որ խիստ շատ են մեր գրականութեան մէջ Փարրարի քարոզագրքի նման գրքեր*, «մեր հոգու համար անթիւ ու անհամար գործեր», իսկ մեր մտքի մեր խելքի համար — գրեթէ ոչինչ...» եւ դա է մեր յետամնացութեան առաջին իսկական պատճառը. մեզ աւելի հետաքրքրողը մի ուրիշ հարց է. արդեօք մեր տէրտէրներն էլ այսպիսի գրքեր չպէտք է կարդան, եւ միայն նորա համար, որ «Կարդացող եւ հասկացող տէրտէրներ չունին»։ Իսկ եթէ ունենանք, եթէ այն երանելի ժամանակը գայ, երբ ըստ «էրաբէրը» «Քահանայական խնդրի» հեղինակի պահանջած ուսումն ու հասկացողութիւնն ունենան. քարոզագրքեր ու քարոզներ պէտք կ'լինին այդ ժամանակ, թէ քոլորովն կեննեն գործածութիւնից, եկեղեցում՝ գնէ Աստուծոյ անունը կտրուի, թէ քոլոր այդ նորանշան տէրտէրները Չեզ հետ հեգնելով ու արհամարհանքով միայն կարտատանեն. «Մեր Աստուածը կայծակի եւ որոտման Աստուած չէ» եւլն։

Կարծեմ քաւական լուրջ հարց է այս եւ արժէ մտածել այս մասին։ Չէ՞ որ ամէն անգամ, երբ մեր հոգեւորականների տգիտութիւնը դատաւարտուում է, գլխաւոր մեղադրանքը միշտ այն է լինում, որ նոքա քարոզել չեն կարող. պահանջուում է ու-

* Թէպէտ մրցանակ կտայինք Լ. ին, եթէ Գիւղեհէի լապտերով չէ՞ Ռեօնտգեհեան հառադայթներով մի հատ գտնէր։

րեմս, որ սովորեն քարոզելու մանկից արդեօք, եթէ ոչ Փարրարի պէս եւրոպական առաջնակարգ քարոզիչներէց, եւ ինչ կարող է լինել նոցա քարոզութեան նիւթը, եթէ ոչ այն աւետարանը, որով ոգեւորուում ու քարոզում են Փարրար, Սպէօշըն, Պարկեր, Հիւսկինթ, Դրիւսնդը, — ոգեւորուել ու քարոզել են Ոսկերեքաններն ու Օգոստինոսները: Պահանջել կրթութեամբ հոգեւորականներ եւ թոյլ չտալ, որ քարոզագրքեր կարդան ու գրեն, ցանկանալ ու սպասել, որ նոցա հոգու կրօնական կեանքի, քարոյական կոչման ու պարտականութիւնների մասին չմտածեն ու մտածել չսովորեցնեն: Դաւաւոր դէպի Աստուած ու սոսկումը մեղքից ծաղր համարեն եւ, իրենց հոգեւորական սքեմն ու կատարած պաշտամունքն իբրեւ պատրուակ ընդունելով՝ կարծեն, թէ իրենց բուն եւ միակ պարտքն է եկեղեցում եւ դուրսը հողն ու այգին մշակելու, խաղողից զինի պատրաստելու, միջոցներ սովորեցնել ժողովրդին, — միթէ հակասութիւն չէ այդ, եւ կատարեալ ու ամենափութագոր չհակասութիւն: Մեր հասկացողութեամբ գոնէ՝ քարոյապէս աւելի փութագոր տարր չկայ մի ժողովրդի կամ հասարակութեան համար, քան այն, որ յանձն է առնում ճշմարտութեան ու լուսաւորութեան դիմակի տակ կեղծիքը յառաջ տանել՝ փաբխեցի լինի այդպէս կեղծաւորողի անունը, թէ եզուիտ, թէ ազատամտական — յառաջադիմական քանակի զինուոր՝ միեւնոյն հաշիւն է: Ներկայ դէպքում՝ կրկնակի փաստ ունինք աչքի առաջ. մէկ որ երբեք կեղծ միջոցը նպատակի սրբութեամբ չի արդարանում եւ միւս՝ վսեմ՝ ու գեղեցիկ նպատակ չկայ էլ այստեղ ամենալին: Սուտ է ու շինծու այն կարծիքը, իբր թէ մեր ժողովրդի ամենամեծ ու ստիպողական կարիքը արուեստի, գիւղատնտեսութեան ու առողջապահութեան վերաբերեալ հրահանգներ ստանալն է: Մենք ծանաղում ենք այդ ժողովրդին. ծնուած լինելով գիւղական ժողովրդի գրկում, զբաղուած նորա զաւակների կրթութեամբ եւ յաճախակի, դեռ մօտ ժամանակներս, պտտած մեր երկրի այնպիսի խուլ անկիւններում, որ երազում չեն տեսել յանուն այդ ժողովրդի

ճամարտակող եւ մեզ նորա մասին քերան անգամ՝ քանալու իրաւունք շտուղ հրապարակախօսները, գոնէ առիթ ենք ունեցել շատ աւելի մօտից դիտելու հայ ժողովրդի նիւթական ու քարոյական վիճակը, եւ զարմացած ենք մնացել միշտ, թէ վերջին մի քանի տասնեակ տարիներում որչափ յառաջ է գնացել նա ամոնասպէս՝ միաժամանակ քարոյապէս օր աւուր յետ յետ գնալով եւ դէպի անկումս դիմելով:

Հարկաւ երկու կողմի համար եւս իրողութիւնը քոլորովին նոյնը չէ, ինչ որ յաճախ երեւոյթը ցոյց է տալիս: Տնտեսական բարեկեցութեան ակնյայտի նշանները, որոնք ամէնից յետ ընկած գիւղերում անգամ երեւում են եւ որոնց մասին սորանից քսան տարի առաջ այդ գիւղացիք չէին երազում՝ խարուսիկ են շատ տեղ եւ կեղծ. ոչ թէ երկիրն է հարստացել, հողի արդիւնաբերութիւնն աւելացել, արուեստը ծաղկել, այլ մի քանի մարդիկ դուրսը հեռու քաղաքներում քաղդ են որոնել, առեւտուր արել եւ հարստութիւն տուն բերել, որով գետնափոր տների փոխարէն՝ կանոնաւոր, մինչեւ իսկ երկյարկանի տուն են շինում, թաղիքի փոխարէն՝ աթոռ հրամեցնում՝ հիւրին, դանակ պատառաքաղով մաշ տալիս: Այնուամենայնիւ այնչափ մեծ է յառաջադիմութիւնն այդ կողմից, որ կարելի է շատ տեղերի համար հակայական անուանել, եւ որքան էլ մղող ծգտուը թիւր լինի առ այժմ՝ պէտք է ենթադրել, որ հետզհետէ իւր ուղիղ ճանապարհը կգտնէ, մինչ օրէցօր մըրցումն աւելանում է, ժողովրդի աչքը բացում եւ նիւթական — դրամական ոյժ հաւաքում երկրի մէջ: Այնպէս արագ կերպով է աճում մեր ժողովրդի ծգտուը դէպի նիւթական շահ, առանց միջոցի ու ճանապարհի խտրութեան, որ գրեթէ մի անդիմադրելի հոսանք է դարձել եւ կկանուի է ամբողջ եւրոպայի արտադրութիւնը. նորան զարկ տալու կարիք չկայ այլ եւս: պէտք է միայն ուղղութիւն եւ նպատակ տալ, իսկ դորա համար «տեխնիկայ»-ի վերաբերեալ առողջամիտ խորհուրդները քաւական չեն: Ողջացէք ու բողոքեցէք որքան կուգէք, թէ մեր ժամանակակից հայ

երիտասարդները զուրկ են էթնոսներից՝ թէ քժիշկ, իրաւարան, արուեստագէտ, գիւղատնտես՝ ամէնքն իրենց բուն կոչումը թողած Բագու են վազում, փողի ետեւից ընկնում. եթէ ստոյգ է, որ կեանքը նիւթական մարմնաւոր քարօրութիւնից դուրս ուրիշ նպատակ չունի, եւ հոգեւոր քարոյական խնդիրներով զբաղուելն անստուծին է՝ ապա թող ո՛չ որ իրաւունք չհամարէ մեղադրելու այդ երիտասարդներին, եւ ողն ու աղաղակն ի գուր են. նորա աշխատում են որքան կարելի է մեծ չափով ձեռք բերել այն միջոցը, որ նիւթական քարօրութիւն, վայելք է տալիս:

Սակայն կեանքն ունի ուրիշ նպատակ, եւ այդ նպատակը մարդոց առաջ է դնում Զրիստոսի աւետարանը. աւետարանական գաղափարներն արժարձելու, տարածելու, կեանքի գաղազան պայմանների մէջ գործադրութեան վարժեցնելու իբրեւ միջոց ծառայում են Փարիսի եւ նորա նմանների քարոզագրքերը, կրօնական—քարոյական խորհրդածութիւնները, ուստի կատարեալ անմոռութիւն է պնդել, թէ այսպիսի գրքեր շարադրողներն ու կարդացնողները դատարկ տեղը ժամաւաճառ են լինում, եւ գործնական նշանակութիւն ունի միայն հողի ու մարմնի մասին խօսելը. աւելի գործնական եւ անհրաժեշտ խնդիր կայ միթէ մեր ժողովրդի համար քան նրա քարոյսպէս եւ հոգեպէս բարձրանալուն նպատակը: Իսկ մեզանում՝ նոյնպիսի պակաս են այդպիսի նպատակի ծառայող գրքեր, որչափ պակաս է եւ ծշմարիտ, կենդանի աւետարանական քարոզը: «Հոգով տիրացու» համարուող հայ ժողովուրդը ներկայումս ամէնից քիչ իւր հոգեւոր պէտքերովն ու պարտականութիւններովն է հետաքրքրուում: Թէպէտ, ինչպէս նկատեցինք, նորա շատ հանգամանքներում՝ զարմուրտի կերպով աչքի ընկնող քարոյական անկումն եւս պայմանական է. որոշ տեսակէտից այստեղ եւս յառաջադիմութիւն եղել է՝ ստիական նեխուած միջնորդի մէջ թաքնւած հոգիներ են փշել, որոնք տգեղ սովորութիւններ վերացրել, կուպիտ բարբիւր մեղմացրել, վարագորած անըւարոյականութիւնը մերկացրել են. ըսյց կրկին՝ յետադիմութիւնն ու ապականութիւնը շատ

աւելի զգալի է, եւ որ իսկապէս ցաւալն է քարոյքման ձգտում՝ այս կէտում՝ գրեթէ չի նկատուում, այլ 1. ի պէս հրապարակախօսների կամայ թէ ակամայ աշխատում են նոցա առաջը փակել, որոնք այդպիսի ձգտում ցոյց են տալիս:

Ի դէպ, կարելոյ ենք համարում յիշել, որ «Արարատ» ի անցեալ համարում լոյս տեսած մեր «Թիրիմացութիւններ» վերնագրով դիտողութիւնները արժանացել են նոյն 1էօի ուշադրութեանը, թող ընթերցողը չկարծէ, թէ նա երբէք արժան կհամարէ մեզ պէս մեղուկների հետ պայքար մտնել. ո՛չ, տեսնելու քան է, թէ ինչպէս առիւծաբար ոտքի տակ է տալիս նա մեզ, կոխկրճում անցնում: Թորհորդ կտայինք անստուծաւ կարդալ այդ յօդուածը, Մշակի 167 հ.-ում, եթէ դեռ չկարդացող եղել է: Աւելի օգտակար կլինի մեր դիտողութիւնների հետ կողք կողքի համեմատելով կարդալ, որպէսզի աւելի պարզ երեւայ, թէ ինչ հոգու, տրամաբանութեան, լիզուի տէր՝ ինչպիսի՛ք քարեխիղճ հրապարակախօսներ են մեզանում՝ հասարակաց կարծիքի առաջնորդող հանդիսանում:

ՏԵՐԻՆԵՐ

Քաղաքական Ժողովը գումարուեցաւ Գաւթիոյ Խորհրդարանին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարքին և ատենապետութեամբ Ստեփան փաշա Ասլանեանի. Ժողովը որոշման համաձայն, Ստեփան փաշա Ասլանեանի քննութեան յանձնուած էր ուսուցչաց սգնութեան տնտեսի մը հաստատութեան համար Ուսումնական Խորհրդոյ կողմէ պատրաստուած կանոնագիրը, Ստեփան փաշա իր քննութիւնը աւարտած ըլլալով, Ժողովին հաղորդեց անոր արդիւնքը, Ժողովը, ըստ այնմ՝ սկզբամբ ընդունեց Ուսումնական Խորհրդոյ սոյն ծրագիրը. բայց գործադրութիւնը ապահովելու համար ինչ ինչ կէտեր բարեփոխման կարօտ գտաւ և որոշեց յանձնարարել Ուսումնական Խորհրդոյ, որպէս զի ծրագիրը սրբագրէ այդ փոփոխմանց համաձայն: